

# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

**Հունվարի 1-ին, երկուշաբթի.- Կաղանդ, Տարեմուտ:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Արտակ աբղ. Տիգրանյանը:

Հավարտ ս. պատարագի Ամանորյա շնորհավորանքի խոսք ասաց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, որից հետո Իջման ս. սեղանի վրա կատարվեց Հայրապետական մաղթանք:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

**Հունվարի 5-ին, ուրբաթ.-Ճրագալույց Ծննդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

**Հունվարի 6-ին, շաբաթ.-ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Առաջինը:



Սուրբ և անմահ Պատարագի ընթացքում



Վերաբերում



Ջրօրհնեք



ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը Փրկչի Ծննդյան տոնի առթիվ շնորհավորում է Վեհափառ Հայրապետին

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը Ծննդյան տոնի առթիվ իր հայրական պատգամը տվեց համայն հայ ժողովրդին, որից հետո Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվեց Ջրօրհնեքի արարողությունը:

Ս. պատարագին ներկա էին Հայաստանի Հանրապետության նախագահը, փոխնախագահը, Ազգային ժողովի նախագահը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները և օտար պետությունների դեսպաններ:

**Հունվարի 7-ին, կիրակի.– Ցիշատակ մեռելոց:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Բաբկեն աբղ. Սալբիյանը և «Հայր մեր»-ից առաջ համապատասխան քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

**Հունվարի 13-ին, շաբաթ.– Տօն անուանակոչութեան Տեառն մերոյ Ցիսուսի Քրիստոսի:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Պարթև քհն. Աշուրյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

**Հունվարի 14-ին, կիրակի.–** Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միաբան Տ. Վռամ աբղ. Ղազարյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

**Հունվարի 15-ին, երկուշաբթի.-** Տոն ծննդեան Ս. Յովհաննու Կարապետին:

Այսօր Մայր տաճարում, Ս. Հովհաննես Մկրտչի խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խորեն քհն. Մարուքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

**Հունվարի 21-ին, կիրակի.-** Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Թադեոս վրդ. Զիրեկյանցը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

**Հունվարի 28-ին, կիրակի.-** Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբղ. Միրզախանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

**Հունվարի 31-ին, կիրակի.-** Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Գրիգոր վրդ. Չիֆթչյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն: